«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմեն Լնդյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն..... 3

Գլուխ 1. Գրաճանաչության ուսուցման մեթոդները 5

Գլուխ 2.Գրի ուսուցումն ու գիտելիքների համակարգի ձևավորումը ավագ նախադպրոցական տարիքում..... 10

Եզրակացություն. 15

Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Աշխատանքի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունների, նախադպրոցական տարիքի երեխաներին գրի ուսուցմանն ու գրաճանաչությանը ծանոթացնելու կարևորությամբ: Ինչպես հայտնի է՝ գիրը, հանդիսանալով մարդկության պատմության խոշորագույն հայտնագործություններից մեկը, մեր օրերում անչափ պահանջված կարողություն է: Խոսել չիմանալով՝ հաղորդակցվել ինչ-որ տեղ հնարավոր է, սակայն չիմանալ գրել և չլինել գրաճանաչ, դա նույնն է, ինչ ապրել անհասկանալի սիմվոլների աշխարհում: Գրուսուցումն ու գրաճանաչությունը՝ ահա սրանք են մեր օրերում կարևոր հաղորդակցման երաշխիքները: Դրանց ուսուցումը սկսվում է դեռ վաղ տարիքից, իսկ ավելի հիմնարար նստվածք այն ունենում է ավագ նախադպրոցական տարիքի (5 – 6 տարեկան) երեխաների շրջանում: Սույն աշխատանքում ուսումնասիրության ենթարկելով հենց ավագ նախադպրոցական տարիքի երեխաների գրուսուցման մեթոդիկան՝ անհրաժեշտ է բացահայտել խոսքի, մայրենի լեզվի, գրի, գրաճանաչության կարողության կարևորությունը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև բացահայտել գրաճանաչության կարևորությունը մարդկության և մասնավորապես նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում:

Աշխատանքն ուսումնասիրության ենթարկելիս մեր առջև դրել ենք հետևյալ կարևորագույն խնդիրները.

1. ծանոթանալ գրի առաջացման, ձևավորման, զարգացման ու կայացման պատմությանը և գրաճանաչության կարևորությանը նախադպրոցականների համար,
2. բացահայտել խոսքի զարգացման դերը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ,
3. ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների գրուսուցման եղանակներն ու ձևերը:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում գրաճանաչության կազմակերպման մեթոդիկան, իսկ աշխատանքի ուսումնասիրության առարկան՝գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի առաջին գլխում *(«Գրաճանաչության ուսուցման մեթոդները»)* ներկայացվել է գրուսուցման զարգացման պատմությունն ու գրաճանաչության ուսուցման մեթոդները: Աշխատանքի երկրորդ գլխում *(«Գրի ուսուցումն ու գիտելիքների համակարգի ձևավորումը ավագ նախադպրոցական տարիքում»)* ներկայացվել է գրի ուսուցման և գիտելիքների համակարգի ձևավորումը ավագ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում:

Տեսական գրականություն : Սույն աշխատանքը շարադրելիս մեզ համար կարևոր ուղեցույց են հանդիսացել Լ.Վիգոտսկու *«Умственное развитие в процессе обучения»* [1] , Ա. Բորոդիչի *«Методика развития речи детей дошкольного возраста»* [2], Ա. Տեր-Գրիգորյանի *«Գրաճանաչության մեթոդիկա»* [3], Ա. Դալլաքյանի *«Նախադպրոցական ինքնուրույնության դաստիարակումը միջանձնային հարաբերություններում»* [4], Ա. Դալլաքյանի *«Նախադպրոցական մանկավարժություն»* [5] և Մ. Յարոշևսկու *«Краткий психологический словарь»* [6] , որոնցից էլ մեծ մասամբ կատարել ենք մեջբերումներ ու լրացումներ մեր աշխատանքում:

---

[1] Տե՛ս Выготский Л., Умственное развитие в процессе обучения, Москва, 1935.
[2] Տե՛ս Бородич А., Методика развития речи детей дошкольного возраста, Москва, 2004.
[3] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., Գրաճանաչության մեթոդիկա, Երևան, 1968:
[4] Տե՛ս Դալլաքյան Ա., Նախադպրոցական ինքնուրույնության դաստիարակումը միջանձնային հարաբերություններում, Երևան, 2008:
[5] Տե՛ս Դալլաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008:
[6] Տե՛ս Ярошевский М., Краткий психологический словарь, Москва, 2005.

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գրաճանաչության ուսուցումը լեզվի դասավանդման մեթոդիկայի ամենահիմնական բաժիններից մեկն է և ունի շատ հին պատմություն: Նրա սկզբնավորումը կապված է մարդկության գրավոր մշակույթի ու դպրության սկզբնավորման հետ: Գրաճանաչության ուսուցման մեթոդիկայի պատմությունը գրեթե նույնքան հին է, որքան և գրերի գյուտը, գրության կամ գրչության պատմությունը:

Գրուսուցման այդ մեթոդներն ու ձևերը հիմնականում պայմանավորված են եղել գրության տվյալ տիպի կամ համակարգի էությամբ, բխել են նրանից: Գրաճանաչության ուսուցման այդ տարբեր մեթոդների ու եղանակների ծագումն ու զարգացումը երբեմն դրված են եղել գիտական հիմքերի վրա, իսկ երբեմն էլ տարերային բնույթ են կրել, որովհետև շատ հաճախ դրանք ծագել ու ձևավորվել են հենց դասավանդման ընթացքում՝ գործնական աշխատանքում ստեղծված կոնկրետ իրադրության թելադրանքով:

Գրաճանաչության ուսուցման սկզբնական մեթոդները ժամանակի ընթացքում անընդհատ փոփոխության են ենթարկվել, նորացվել ու թարմացվել են և կամ ուղղակի փոխվել նորերով ըստ ժամանակի պահանջների: Այդ փոփոխությունները ևս պայմանավորված են եղել տվյալ ժողովրդի մշակույթի առաջընթացով, գիտության ու տեխնիկայի զարգացման աստիճանով, նրա հասարակական գոյավիճակով: Գրաճանաչության ուսուցման մեթոդների և ձևերի փոփոխությունները միշտ կատարվել են դրանց անընդհատ կատարելագործման, ուսուցման գործի հեշտացման, արդյունավետության ու գրուսուցման տևողության կրճատման ուղղությամբ, բացառությամբ միջնադարի, երբ սխոլաստիկան ու դոգմատիզմը այս բնագավառում ևս լիակատար իշխանություն էին ձեռք բերել և երկար ժամանակ արհեստականորեն կասեցրին մարդկանց մտավոր առաջընթացը: Գրաճանաչության ուսուցման նոր մեթոդների ստեղծման բնագավառում մեծ ծառայություններ են ունեցել Ֆրիդրիխ Գեդիկեն, Հայնրիխ Ստեֆանին և Ժակոտոն:

Գրաճանաչության բնույթը հասկանալու համար նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե որոնք են գրավոր խոսքի առանձնահատկությունները և որն է գրելու

և կարդալու գործընթացում առաջնայինը: Գրելը և կարդալը հանդիսանում են խոսքային գործունեության տեսակներ,որոնց հիմքն է հանդիսանում բանավոր խոսքը: Գրաճանաչությանը նախապատրաստելու համար կարևոր է երեխայի խոսքի զարգացման ողջ գործընթացը մանկապարտեզում՝ կապակցված խոսքի զարգացումը, բառապաշարի հարստացումը, խոսքի քերականական կողմի ձևավորումը, հնչյունային կուլտուրայի դաստիարակումը: Ուսուցիչների փորձերն ու ուսումնասիրությունները ցույց են տվել , որ այն երեխաները, որոնց խոսքը լավ է զարգացած, հրաշալի տիրապետում են քերականությանը և այլ ուսումնական առարկաների:

Խոսքի զարգացման մակարդակի և գրաճանաչության ուսուցման պատրաստվածության ցուցանիշները հանդիսանում են հետևյալ կարողությունները՝ ուշադրության կենտրոնացումը բանավոր առաջադրանքի վրա, կամայականորեն և միտումնավոր խոսքի կառուցումը, ամենահամապատասխան խոսքային միջոցի ընտրությունը բանավոր առաջադրանքը կատարելու համար, առաջադրանքի լուծման հնարավոր ուղիների որոնումը, բանավոր առաջադրանքի լուծման գնահատումը:

Մի կողմից խոսքային կարողությունների և հմտությունների կատարելագործումը նախապայման է հանդիսանում խոսքի այլ նորագոյացության համար, մյուս կողմից լեզվի գիտակցաբար գործածումը իր տարրերով առանձնացված չէ խոսքի գործնական կարողություններից և հմտություններից: Գրաճանաչության ուսուցման նպատակաուղղված նախապատրաստումը բարձրացնում է խոսքի հիմնական գիտելիքների տիրապետումը իր կամայական գիտակցմամբ, որն իր հերթին, ազդեցություն է ունենում ընդհանուր խոսքի զարգացման, երեխայի խոսքի կուլտուրայի զարգացման վրա: Կարդալու և գրելու մեխանիզմները ժամանակակից հոգեբանության մեջ դիտվում են որպես բանավոր խոսքի կոդավորման և ապակոդավորման գործընթաց: Բանավոր խոսքում յուրաքանչյուր բառի նշանակություն կոդավորված է որոշակի խոսքի հնչյունային համակարգով: Գրավոր խոսքում օգտագործվում է այլ կոդ (դրանք կարող են լինել հիերոգլիֆներ, ինչպես չինարենում կամ տառեր , ինչպես հայերենում) փոխկապակցված բանավոր խոսքին: Մի կոդից մյուսին անցնելը անվանում են վերակոդավորում: Կարդալը տառային

կոդի փոխակերպումն է ձայնային բառի, իսկ գրավորը՝ հակառակը՝ բանավոր խոսքի վերակոդավորումը:

Ուսումնասիրությունները հնարավորություն են տվել ընտրել ամենաօպտիմալ տարիքը գրաճանաչության ուսուցման համար: Պարզվում է որ, նախադպրոցահասակ երեխաներին բնորոշ է գրաճանաչության ուսուցման զգայաընկալումը: 5 տարեկան երեխան տիրապետում է մայրենի լեզվի հնչյունային կողմի զգայաընկալմանը, այդ պատճառով այս տարիքը ամենանպաստավորն է ընթերցանության ուսուցման համար: 6 տարեկան երեխաները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ընթերցանության հանդեպ և հաջողությամբ տիրապետում են դրան: Իսկ ձայնային կողմնորոշման ձևավորման գործընթացը նպատակահարմար է սկսել ավելի վաղ՝ 5 տարեկանում, երբ երեխային ամենաշատը հետաքրքրում է լեզվի հնչյունային կողմը, հնչյունային խոսքի ճշգրտությունը, հնչյունային խաղերն ու բառաստեղծումը: Գրաճանաչության ուսուցման նախապատրաստումը նախատեսվում է ոչ միայն ավագ խմբում, այլ շատ ավելի վաղ[7]:

Այսպիսով՝ արդեն իսկ փոքրերի երկրորդ խմբում ձևավորվում է բառի հնչյունային ընկալման կարողությունը, երեխաներին ծանոթացնում են «բառ» և «հնչյուն » տերմիններին: Միջին խմբում երեխաներին շարունակում են ծանոթացնել «բառ» և «հնչյուն » տերմիններին առանց սահմանումների, այսինքն սովորեցնում են հիշել և կիրառել այս բառերը առաջադրանքների կատարման և խոսքային խաղերի ժամանակ: Երեխայի մոտ ձևավորվում են հնչյունները տարբերելու կարողությունը, որոշել և առանձին արտաբերել բառի առաջին հնչյունը, անվանել բառը նշված հնչյունով:

Ավագ խմբում սովորեցնում են վերլուծել բառի կառուցվածքը, առանձնացնել շեշտադրությունը և նշել շեշտի տեղը բառի կառուցվածքում, տարբերակել հնչյունները (ձայնավոր, բաղաձայն) և ճիշտ օգտագործել հետևյալ տերմինները: Դպրոցի նախապատրաստական խմբում ավարտվում է գրաճանաչության հիմունքներին ծանոթացման աշխատանքը: Այստեղ նախատեսվում է երեխաներին սովորեցնել կարդալ և գրել: Տարվա վերջում երեխաները պետք է սովորեն արագորեն

[7] Տե՛ս Դալլաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008, էջ 32:

կարդալ 30 - 40 բառ մեկ րոպեում, գրել բառը տետրում՝ հետևելով տառերի ճիշտ հաջորդականությանն ու հիմնական տարրերին, վարպետանալ գրելու կեցվածքին[8]:

Միջին խմբում նախատեսվում է զարգացնել ֆոնեմատիկ լսողությունը, տարբերել լսողությամբ և բառի անվանումը որոշակի հնչյուններով, ավագ խմբում նախատեսվում է սովորեցնել սահմանել հնչյունի տեղը բառում: Դպրոցի նախապատրաստական խմբում խորհուրդ է տրվում երեխաների մոտ պատկերացումներ ձևավորել նախադասությունների մասին (առանց քերականական սահմանումների), մշակել 2 - 4 բառերի միջոցով նախադասություն կազմելու կարողություն, սովորեցնել վանկերի բաժանել երկվանկ բառերը, կազմել բառեր վանկերի միջոցով, սովորեցնել վանկերի բաժանել եռավանկ բառերը բաց վանկերով:

Երեխաների նախապատրաստման պահանջների ծավալը որոշվում է նրանով, թե որ տարիքում գրաճանաչության ուսուցման ինչ մակարդակ է նախատեսվում: Կարդալու և գրելու կարողությունների տիրապետման օրնաչափությունների հետ միասին, գրաճանաչության ուսուցման նախադրյալներ ունեցող երեխաները , մանրակրկիտ ուսումնասիրված և կազմված ուսուցման մեթոդիկան ,երեխաների մտավոր և խոսքային զարգացման դրական տեղաշարժը հնարավորություն են տալիս պնդել, որ գրաճանաչության ուսուցման նախապատրաստումը նպատակահարմար է բաժանել հետևյալ ուղղությունների.

- Բառի հետ ծանոթացում – բառի առանձնացումը՝ որպես խոսքի իմաստային առանձին միավոր,
- Նախադասության հետ ծանոթացում – դրա առանձնացումը ՝ որպես խոսքի իմաստային միավոր,
- Նախադասության կառուցվածքի բանավոր ծանոթացում – նախադասությունը բառերի բաժանելը և 2-4 բառերով նախադասության կազմումը,
- Բառի վանկային կողմի ծանոթացում – բառի վանկատում (2 - 3 վանկ) և բառի կազմում վանկերի միջոցով,
- Բառի հնչյունային կողմի ծանոթացում, բառի հնչյունային վերլուծություն կատարելու կարողությունների ձևավորում – քանակի որոշում, հնչյունների հաջոդականություն, իմաստի ընկալումը:

[8] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., Գրաճանաչության մեթոդիկա, Երևան, 1968, էջ 119 – 122:

Առաջատար դեր է խաղում բառի հնչյունային կազմի վերլուծության կարողության ձևավորումը, քանի որ կարդալու և գրելու գործընթացը կապակցված է գրաֆիկ պատկերի տեղափոխմանը բանավոր խոսք և հակառակը: Գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շրջանի հիմնական նպատակը երեխաներին միասնական դասարանական կոլեկտիվի մեջ կազմակերպելը և կարդալ ու գրել սովորելու աշխատանքի համար նրանց տեսականորեն ու գործնականորեն, հոգեբանորեն ու ֆիզիկապես նախապատրաստելն է: Այս շրջանի տևողությունը միշտ էլ տատանվել է. մինչև վերջերս՝ հնչյունային մեթոդի գործադրման ժամանակ, այն տևում էր 2 - 3 շաբաթ, հնչույթավանկային մեթոդի գործադրումով այդ ժամանակը կրճատվեց հասցվեց 1-1,5 շաբաթի, հնչույթաբառային մեթոդի գործադրման պայմաններում այն տևում է 3– 4 շաբաթ և այլն:

Նախապատրաստական շրջանը ոչ միայն անհրաժեշտ, այլև խիստ կարևոր է բոլոր դպրոցների ու բոլոր առաջին դասարանների համար: Այդ նախապատրաստությունը պետք է կատարվի ժամանակակից մանկավարժական գիտությունների պահանջներին համապատասխան, որոշակի ծրագրով ու մեթոդներով, որպեսզի անհրաժեշտ արդյունք տա, նպաստի երեխայի մտավոր զարգացմանը, գրաճանաչության ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի վերցրած տարբեր տիպի պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս. հնարավոր չէ ասել, թե երբ է ավարտվում մեկը և երբ է սկսվում մյուսը, որովհետև դրանք խորապես միմյանց մեջ ներթափանցված, փոխադարձորեն միմյանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են[9]:

[9] Տե՛ս Տեր-Գրիգորյան Ա., Նշվ. աշխ., էջ 124 – 132:

ԳԼՈՒԽ 2. ԳՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ՈՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Երեխային գրին ծանոթացումն ու ուսուցումը սկսելու ամենահարմար ժամանակը կոահելը բավականին բարդ է: Սակայն նախընտրելի է ուսուցումը սկսել փոքր-ինչ ուշ, քան շուտ: Ծնողներին խորհուրդ է տրվում սեփական երեխաների մասին իրենց կարծիքը չափավորել և ուշադիր հետևել, թե ինչպես է երեխան ընկալում: Եթե երեխային սկսում են ուսուցանել գրել ավելի վաղ, քան նա հասունացել է դրա համար կամ սովորեցնել մի առարկա, որի բովանդակությունը դեռ չի համապատասխանում երեխայի հասունությանը, ապա անխուսափելիորեն կհանդիպեն բնական դժվարությունների: Եթե երեխայի ուշադրությունը թույլ է, խոսքն անկապ է ու կցկտուր, բառերի արտասանությունն անհաջող, ապա ավելի լավ է չսկսել կանոնավոր ուսուցումը, այլ նախապատրաստվել դրան՝ երեխաներին շրջապատող առարկաների մասին զրուցելով, նրանց համար հասկանալի որևէ երգի ուսուցումով և այլն:

Մայրենի լեզվի ուսուցումը խիստ պայմանական է, քանի որ մարդը մայրենի լեզու յուրացնում է ամբողջ կյանքի ընթացքում, կենդանի շփման և հաղորդակցման միջոցով: Տիրապետել մայրենի լեզվին՝ նշանակում է ազատ, անկաշկանդ և գրագետ խոսք, հաղորդակցություն, մտածողություն, իհարկե մի ամբողջություն, որը հատուկ է ձևավորված և որոշակի կրթություն ստացած անձին: Այդ կրթության որոշակի հատվածը՝ իր խնդիրներով, ավագ նախադպրոցական տարիքի երեխաներինն է: Ֆունկցիոնալ հաղորդակցությունը, պատճառաբանված գործունեությունը, նպատակային աշխատանքը երեխայի հետ միայն հավասարը-հավասարի հետ շփումը, կարծում ենք, կստեղծի այն բնական միջավայրը, որն անհրաժեշտ է զարգացող մարդուն: Մայրենիին տիրապետելու կարևորագույն պայմաններից են կարդալն ու գրելը: Հայտնի ճշմարտություն է, որ կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով: Իսկ գրելու կամ կարդալու արդյունավետության համար շատ կարևոր է այն, թե երեխան ինչո՞ւ պետք է կարդա և ինչո՞ւ պետք է գրի: Այս ինչուների

պատասխանը երեխաները փնտրում են դեռևս գրաճանաչ դառնալուց առաջ՝ ինչի՞ համար է տառը[10]:

Ինչպես գիտեք, նախադպրոցական տարիքը համարվում է բուռն սոցիալականացման շրջան: Այն հանդիսանում է հոգեկանի ինտենսիվ զարգացման, հոգեֆիզիոլոգիական գործառույթների, անձնավորության տարբեր կազմավորումների առաջացման փուլ: Սոցիալական նոր իրադրության առաջացման հետ կապված շրջապատող մարդկանց միջավայրում նախադպրոցականի գրաված տեղն էականորեն տարբերվում է այն տեղից, որը բնորոշ է վաղ մանկական տարիքի երեխայի համար: Ավագ նախադպրոցական տարիքի երեխան, երբ փորձում է ինչ-որ բան պատմել, առաջ է գալիս այդ տարիքին համապատասխան խոսքային կառույց. նա սկզբից օգտագործում է դերանուններ, ապա, զգալով իր ասածի անհստակությունը, կիրառում է նաև գոյականներ. այն հանդիսանում է երեխայի խոսքի զարգացման գոյականական էտապը: Արդյունքում երեխան տիրապետում է կոնտեքստային խոսքին, ուր բավական շատ է նկարագրվում իրավիճակը: Երեխայի խոսքի յուրահատուկ տեսակ է բացատրական խոսքը: Ավագ նախադպրոցական շրջանում հաճախ պահանջ է առաջանում բացատրել իր հասակակիցներին խաղի կանոնները. այս ժամանակ առաջ է գալիս բացատրական խոսքը, որը երեխայից պահանջում է մտքի հաջորդական շարադրում, իրավիճակի հիմնական կապերի և հարաբերությունների առանձնացում: Շարունակում են կատարելագործվել երեխայի խոսքի բոլոր կողմերը: Ավագ նախադպրոցական տարիքում երեխան խոսքի զարգացման այնպիսի մակարդակի է հասնում, երբ լեզուն, խոսքը դառնում են ոչ միայն հաղորդակցման և աշխարհաճանաչման լիարժեք միջոցներ, այլև գիտակցական աշխարհընկալման առարկաներ[11]:

Մարդու խոսքը զարգանում է աստիճանաբար՝ անցնելով մի շարք փուլեր: Խոսքը դրսևորվում է երկու ձևով՝ *բանավոր* և *գրավոր*, որոնք սերտորեն պայմանավորված են միմյանցով, սակայն երկրորդը հետևում է առաջինին: Գրավոր ու բանավոր խոսքի զուգակցումն ուսումնական գործընթացում ուսուցչից պահանջում է մանկավարժական, մասնագիտական հմտություն: Խոսքը կարող է

[10] Տե՛ս Արնաուդյան Ա., Գիրք ծնողների և ուսուցիչների համար, Երևան, 1994, էջ 5 – 7:
[11]Տե՛ս Խուգեյան Ա., Ավագ նախադպրոցական կապակցված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում, Երևան, 2016, էջ 9 – 10:

լինել ներքին և արտաքին: Արտաքին խոսքն էլ իր հերթին ունենում է դրսևորման երկու ձև՝ բանավոր և գրավոր: Բանավոր խոսքը մտածողության նյութական թաղանթն է և ծառայում է որպես հաղորդակցման հիմնական միջոց մարդկանց միջև, իսկ գրավոր խոսքը նպաստում է հնչյունային խոսքի վերարտադրմանն ու կայունացմանը:

Բանավոր խոսքի արտահայտության ձևերն են՝ զրույցը, բանավեճը, զեկուցումը, դասախոսությունը, ճառը, հայտարարությունը, կոչը, երգը, չափածո և արձակ խոսքը: Գրավոր խոսքը գրի առնված, գրավոր տեքստի վերածված խոսքն է, իրացվում է գրային պայմանական նշանների գործադրումով, ձեռքով, ընկալվում է տեսողությամբ կամ շոշափելիքով: Այս դեպքում խոսքային իրադրություն ստեղծվում է մտովի, ոչ իրականում: Գրավոր խոսքն ունի չորս կողմ.

- տեխնիկական կամ գրելու համար անհրաժեշտ նորմաների պահպանում, առանց որի անհնար է պատկերացնել գրելու գործողությունը,
- գրաֆիկական կամ տառերի ու գրի վայելչագրական կողմի պահպանում,
- ուղղագրական կամ բառի հնչյունային կազմի տառային արտահայտության ճիշտ պահպանում,
- միտք կամ բովանդակություն, որը գրի առնելիք մտքերի ճիշտ մտապահումն է:

Բառը գրելուց առաջ երեխան պետք է ընկալի ու հասկանա ինչպես բառիմաստը, այնպես էլ հնչյունային ու տառային կազմը, որպեսզի այն ճիշտ գրի, գրելու ընթացքում անհրաժեշտ վերլուծություններ ու համադրություններ կատարի: Դրա համար բառը նախապես պետք է կազմել շարժական տառերով, վանկային ու հնչյունային վերլուծության ենթարկել, որպեսզի երեխաները ճիշտ ընկալեն բառի կազմությունը, կանխվեն հնարավոր սխալները, երեխաների մեջ մշակվեն ինքնահսկողության ու ինքնաստուգման կարողություններ: Դպրոցում պետք է կարևորել կազմակերպված ու ճիշտ խոսքը, սովորեցնել, որ սեփական խոսքը դիմացինի նկատմամբ համարժեք վերաբերմունքի չափանիշ է: Սովորողն այդպես մշակում է իր խոսքը, ձևավորում գրավոր և բանավոր արտահայտվելու ճիշտ ձևերը, յուրացնում խոսքային վարքի մշակույթ՝ սովորելով ըստ անհրաժեշտության խոսել, լսել, արձագանքել, մասնակցել քննարկումների: Բացի որոշակի առաջադրանք կատարելուց՝ սովորողը նյութից ակամա վերցնում է լեզվական կառույցներ,

յուրացնում բառեր ու արտահայտություններ, որոնք հանդիսանում են բառապաշարի հարստացման միջոց, որն էլ օգնում է բանավոր և գրավոր խոսքի ճիշտ ձևավորմանը:

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ձևավորվում են գրելու կարողությունները, որոնք իրենց մեջ են ներառում ձեռքի մանր մոտորիկայի զարգացումը, թղթի վրա ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, գրաֆիկական պատկերների տարրերի պատճենման կարողությունը, այդ թվում նաև տառերն ու բառերը: Բոլոր այս նախապայմանները հնարավորություն են տալիս երեխային հաջողությամբ իրականացնել գրելու կարողությունները դպրոցում: Գիրը խոսքի հատուկ ձև է, որի ժամանակ նրա տարրերը ֆիքսվում (արձանագրվում) են թղթի վրա: Գիրը համարվում է առավել կոմպլեքսավորված հմտություն, որոնք ձևավորվում են ուսուցման գործընթացի ժամանակ: Գրուսուցման կարևորագույն տարրերից է հանդիսանում գրի գրաֆիկական ձևավորման կարողությունը, որի հետ զուգահեռաբար ընթանում է նաև ուղագրական կարողությունների ձևավորումը[12]:

Գիրն ունի բավականին բարդ հոգեբանա-ֆիզիոլոգիական կառուցվածք և իր մեջ է ներառում արտաբանական (արտաբերական) և լսողական վերլուծություն, տեսողական հիշողություն և տեսողական վերահսկողություն, լեզվական կարողություն և այլն: Սկզբնական շրջանում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հետ գրուսուցումն անցնելիս պետք է նախ և առաջ յուրացնեն տառերի մասին հասկացությունը, այն է՝ գրաֆիկական նշանները, սովորեն ճիշտ, հստակ և բավականին արագ կերպով գրել բոլոր գրաֆիկական տարրերը՝ միաժամանակ պահպանելով ճիշտ դիրք, ճիշտ ձեռքի շարժում, ճիշտ շարժման հետագիծը, բացի այդ հարկավոր է ճիշտ տարբերակել խոսքի ձայները, անսխալական կերպով ճանաչել և հարաբերել դրանք տառերի հետ, քանի որ գրաֆիկականի հետ զուգահեռ ընթանում է նաև ուղագրական կարողության ձևավորումը:

Գրուսուցման գործընթացի հենց «տեխնիկական» կատարումը բարդանում է նրանով, որ 5 – 6 տարեկան երեխաների մոտ թույլ են զարգացած դաստակի մկանները, չեն ավարտվել ոսկորների պնդացումը և մատների ծայրերը, չի կատարելագործվել շարժումների նյարդային ռեգուլյացիան, ինչպես նաև թույլ է դիմադրողականությունը պարբերական ճնշումների նկատմամբ: Բացի այդ՝ շատ

[12] Տե՛ս Буцикина Т., Развитие общей и мелкой моторики как основа формирования графомоторных навыков у младших школников, Логопед, 2005, №3, с. 84 – 94.

երեխաների մոտ դեռևս ձևավորված չեն տարածական մեխանիզմի ընկալումն ու տեսողական հիշողությունը[13]:

Գրուսուցման օբյեկտիվ դժվարությունները նվազեցնել կարելի է այն դեպքում, եթե ճիշտ պատրաստել երեխային, և բացի այդ՝ հաշվի առնել նրա տարիքային հնարավորությունները ուսուցման գործընթացում: Հարկ է նշել, որ անհրաժեշտ է իմանալ գրելու կարողության ձևավորման փուլերը: Կարողությունը գործողություն է, որը ձևավորվել է կրկնության ճանապարհով և բնութագրվում է յուրացման բարձր մակարդակով[14]: Կարողության ձևավորման գործում առանձնանում են երեք հիմնական փուլեր.

- *անալիտիկ (վերլուծողական)* – որի հիմնական բաղադրիչ է հանդիսանում գործողության առանձին տարրերի տարանջատումն ու յուրացումը, ինչպես նաև բովանդակության պարզաբանումը, որի ընթացքում կարևոր նշանակություն ունի ոչ միայն երեխայի զարգացման մակարդակը, որոշակի գիտելիքների և կարողությունների առկայությունը, այլև բացատրելու հնարավորությունը, թե ինչ և ինչպես պետք է երեխան անի, նրա գործողությունների գիտակցման աստիճանը: Ցավոք սրտի, գոյություն ունեցող մեթոդիկան կառուցված է *«արհեստական պատճենման»* սկզբունքի հիման վրա, որոնց դեպքում առաջատար ուղեցույց է հանդիսանում *«նայի՛ր և արա՛ այնպես, ինչպես ես»:* Ավաղ, երեխաները *«տեսնում են»* ամեն ինչ տարբեր և հաճախ ամրագրում են ուսուցման գործընթացի ժամանակ իրենց իսկ սխալները: Իրավիճակը բարդանում է նրանով, որ մեծահասակները ոչ միշտ են բացատրում ինչ և ինչպես անել:
- *սինթետիկ* – այս փուլը սինթետիկ է անվանված պայմանականորեն: Սա հանդիսանում է ամբողջական գործունեության առանձին տարրերի միավորման փուլ :
- *ավտոմատիզացիա (մեքենայացում)* – սա կարողության՝ որպես գործողության ձևավորումն է, որը բնութագրվում է յուրացման բարձր մակարդակով[15]:

---

[13] Տե՛ս Филиппова С., Подготовка дошколников к обучению письму, СПБ, 2009, с. 31 – 33.
[14] Տե՛ս Ярошевский М., Краткий психологический словарь, Москва, 2005, с. 78.
[15] Տե՛ս Филиппова С., Նշվ. աշխ., с. 35.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Գրի ուսուցումը բավական բարդ գործընթաց է։
2. Գրի ուսուցումը հարմար է սկսել նախադպրոցական տարիքում։
3. Անշուշտ պետք է հաշվի առնել երեխայի հնարավորությունները և ճիշտ գընահատել իրավիճակը։
4. Գրի ուսուցումը պետք է սկսել բանավոր խոսքին հնարավորինս լավ տիրապետելու դեպքում։
5. Գիրը հարմար է սովորել շարժական պատկերներով։
6. Երեխան պետք է իմանա հնչյունը, դրան համապատասխան տառը։
7. Երեխան պետք է կարողանա աշխատել երկվանկանի և եռավանկանի բառերի հետ, ինչպես նաև 2-4 բառանոց նախադասության հետ՝ առանց այն սահմանելու։
8. Գրելը և կարդալը իրար հետ սերտորեն կապված են։
9. Սովորեցնելը պարզ նմանակում չէ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա. Հայերեն

1. Արնաուդյան Ա., Գիրք ծնողների և ուսուցիչների համար, Երևան, 1994:
2. Դալլաքյան Ա., Նախադպրոցական ինքնուրույնության դաստիարակումը միջանձնային հարաբերություններում, Երևան, 2008:
3. Դալլաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2008:
4. Խուգեյան Ա., Ավագ նախադպրոցական կապակցված խոսքի զարգացումը համատեղ գործունեության ընթացքում, Երևան, 2016:
5. Տեր-Գրիգորյան Ա., Գրաճանաչության մեթոդիկա, Երևան, 1968:

Բ. Ռուսերեն

1. Бородич А., Методика развития речи детей дошкольного возраста, Москва, 2004.
2. Буцикина Т., Развитие общей и мелкой моторики как основа формирования графомоторных навыков у младших школников, Логопед, 2005, №3.
3. Выготский Л., Умственное развитие в процессе обучения, Москва, 1935.
4. Филиппова С., Подготовка дошколников к обучению письму, СПБ, 2009.
5. Ярошевский М., Краткий психологический словарь, Москва, 2005.